

# «ԼԱՎ ԳԻՏՆԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ ՊԵՏՔ Է ՆԱԵՎ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼ»

Խորագրի հյուրը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ, «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ Է:

**Ի՞նչ խնդիրներ են ծառայում այսօրվա երիտասարդ գիտնականների առջև, և գիտության կոմիտեն ի՞նչ քայլեր է ձեռնարկում դրանք լուծելու համար (ԱՆԻ ԴԵՂՈՅԱՆ, լրագրող, 19 տարեկան):**

Երիտասարդների հետ կապված խնդիրը ինչպես մեր երկրում, այնպես էլ հետխորհրդային ողջ տարածքում բարդ հիմնահարցերից է: Որո՞նք են դրանք. նախևառաջ՝ հզոր միության փլուզումից հետո յուրահատուկ ֆինանսավորման ծավալները էապես պակասեցին: Տարբեր տվյալներով՝ մեզանում այսօր գիտությունը 20-25 անգամ քիչ է ֆինանսավորվում: Բացի դա՝ սկսվեց «մարդաորս»: Գիտության մեջ որոշակի դերակատարում ունեցող, շնորհաշատ երիտասարդներին առաջարկվեցին ավելի լավ պայմաններ, և նրանց զգալի մասը հեռացավ Հայաստանից: Այսօր էլ երիտասարդների առջև ծառայում խնդիրները նույնն են. առաջինը՝ գիտության անբավարար ֆինանսավորման պայմաններում նրանց համար գիտությունը «գայթակղիչ» չէ, և մի մասը, որոշակի հաջողությունների հասնելուց հետո, ճանապարհներ է փնտրում այստեղից հեռանալու համար: Բայց, բարեբախտաբար, օժտվածների մի մասն էլ, հայրենասիրական մղումներ ունենալով, մնում է: Ցավոք, չէի ասի, թե այս հարցում մինչ այսօր պետական մոտեցում ցուցաբերվել է: Մակայն, վերջին ժամանակներու. նոր հռչակումներու. հնչաես

ինչպես ուսանողներ, ասպիրանտներ, այնպես էլ թեկնածու՝ արդեն կայացած գիտնականներ: Մեր նախածեղություններից կլինի նաև, հաջորդ տարվանից, մինչև 35 տարեկան գիտության թեկնածուների ու մինչև 45 տարեկան գիտության դոկտորների կոչումների հավելավճարների ավելացումը, եթե հաջողվի՝ կրկնապատկումը: Պատկերացման համար ասեմ, որ գիտության թեկնածուն հիմա ստանում է 10 հազար դրամ հավելավճար: Պատրաստվում ենք նաև 100 լավագույն գիտնականների հավելյալ աշխատավարձեր տրամադրել. նման մոտեցում կա աշխարհի շատ երկրներում՝ բարձր վարկանիշ ունեցող գիտնականներին համար: Իմ արդեն նախնական տվյալների համաձայն՝ Հայաստանում կան մինչև 35 տարեկան բավականա-

թյուններից կառանձնացնելի հայագիտությունը, որն այսօր մեր պետության գերակա ուղղություններից է համարվում, և որին խիստ ուշադրություն ենք դարձնում: Այդ առումով այս տարի մի շատ կարևոր քայլ արեցինք. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ու Մատենադարանի աշխատանքների ավելի հաջող կազմակերպման համար մենք նրանց հավելյալ հաստիքներ ենք տրամադրել, և աշխատավարձերն էլ մոտավորապես 40 տոկոսով բարձր են մնացած գիտական հիմնարկների աշխատավարձերից:



## Հ Ա Ր Ց Ե Ր Ն` Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Ց

նիշ, և այսօր էլ համեմատաբար լավ վիճակում են: Հասարակական գիտու-

Իսկ ուրվագծվելիք գերակայություններն արդեն պարզ են՝ գլոբալ տաքացման ու կլիմայի փոփոխության խնդիրներ, հայաստանյան հանքանյութերի ու դրա հետ կապված բնապահպանական հարցեր, խմելու ջրի պաշարների, Սևանի պահպանության, առողջապահական, գյուղատնտեսական, սննդի անվտանգության ու այլ ուղղություններ:

**«Որպես գիտնական՝ ինչպիսի՞ առաքելության մեջ եք Դուք Չեզ տեսնում (ԱՐՏԵՄ ՕԱՀՔԱՉՅԱՆ, կառավարման փլիստիայության մասնագետ):**

«Որպես գիտնականի՝ իմ զբաղմունքը ֆիզիկան է. ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր եմ ու մինչ հիմա էլ շարունակում եմ հետազոտական գործունեությունս, չնայած շատ զբաղված եմ վարչական աշխատանքով: Պետական համալսարանում էլ կես դրույքով պրոֆեսոր եմ աշխատում. այդտեղ բավականին լավ լաբորատորիա ունեմ, որը մեծ մասամբ իմ ջանքերով է ստեղծվել, ասպիրանտ ունեմ, սեմինարներին եմ մասնակցում, հնարավորության դեպքում աշխատում եմ նաև գիտաժողովներին մասնակցել. այնպես որ՝ ես դեռ ինձ ավարտված գիտնական չեմ համարում ու խնդիրներ ունեմ լուծելու... Ու որտեղ էլ աշխատելու լինեմ՝ հետազոտական ու դասախոսական աշխատանքս համալսարանում չեմ թողնելու, քանի որ ինձ համարում եմ համալսարանական:

Իսկ իբրև վարչական աշխատողի՝ իմ առաքելությունը տեսնում եմ նրանում, որ գիտությունը Հայաստանում լինի մոտավորապես այն վիճակում, ինչ խորհրդային ժամանակներում էր գոնե, ինչպես նաև, որ գնալով մեր միջազգային հեղի-

նաև գիտության ասպարեզի նվիրյալները, բոլոր սկսեցինք արդեն լուրջ ուշադրություն դարձնել այս խնդրին. ինչպե՞ս անել, որ մեր շնորհաշատ երիտասարդները չլքեն-չհեռանան հայրենիքից:

Քայլերից մեկը՝ հանրապետության նախագահի բարձր հովանու ներքո ստեղծվեց «Լույս» հիմնադրամը, որը կոչված է ուսումը արտասահմանի հեղինակավոր կրթօջախներում շարունակել ցանկացող երիտասարդ մասնագետներին աջակցելու ու նրանց հետագա կապը Հայաստանի հետ ապահովելու: «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամը ևս նպատակ ունի շնորհաշատ երիտասարդներին օգնելու, և գոյության այս կարճ ժամանակահատվածում մենք մեզ համար պարզեցինք, որ կան շատ խելոք երիտասարդներ, որոնց մտավոր ունակությունները պետք է Հայաստանում օգտագործել. չպետք է մոռանալ, որ նրանք մեր ապագան են:

Գիտության պետական կոմիտեն ևս որոշակի քայլեր է ձեռնարկում. մոտ ապագայում մինչև 35 տարեկան գիտնականների համար առանձին դրամաշնորհային ծրագրեր ենք ուզում իրականացնել, և եթե բյուջեի հնարավորությունները մեզ թույլ տան, այս տարվա երկրորդ կեսին, երևի, արդեն մրցույթ կհայտարարենք: Հաջորդը՝ մեր բյուջեում արդեն նախատեսված են գումարներ արտերկիր գործուղումների համար՝ սեմինարների, գիտաժողովների, խորհրդակցությունների մասնակցելու նպատակով, և գերապատվությունը տալիս-տալու ենք հիմնականում երիտասարդներին. օրինակ՝ անցած տարի կոմիտեի գումարներով մոտավորապես 22 գործուղում է եղել տարբեր երկրներ՝ Ավստրալիա, ԱՄՆ, Եվրոպա, Ռուսաստանի Դաշնություն, ու մեկնողներից 6-ը եղել են երիտասարդներ՝

չափ թվով գիտնականներ, որոնք կարող են այդ ցուցակում հայտնվել: Հետո, մեր նախաձեռնությամբ, նախատեսվում է նաև ավելացնել ասպիրանտների կրթաթոշակները՝ մինչև նվազագույն աշխատավարձի չափ...

Այսինքն՝ այս բոլոր քայլերն արվում են երիտասարդների համար: Ավելացնեն նաև, որ մեր բոլոր դրամաշնորհային ծրագրերում ֆինանսավորման նախապայմաններից մեկն այն է, որ ծրագրերում ընդգրկվածների մոտ 20-25 տոկոսը լինեն երիտասարդ գիտնականներ: Այս շեշտադրումը միշտ եղել ու լինելու է մեր կողմից:

**Հայաստանում գիտության զարգացման ի՞նչ հեռանկարներ եք տեսնում, որո՞նք են այսօրվա մարտահրավերները (Ա. ԴԵՂՈՅԱՆ):**

-Հայաստանը խորհրդային ժամանակներում եղել է գիտության հանրապետություն: Գիտական անհրաժեշտ շատ-շատ ծրագրեր, հատկապես կիրառական բնույթի, իրականացվում էին այստեղ: Մասնավորապես՝ Մերգելյանի հիմնադրած հաշվիչ մեքենաների ինստիտուտը այն եզակի հիմնարկներից մեկն էր, որը Խորհրդային Միությունում ստեղծեց առաջին հզոր համակարգիչները: Դրանք BSM սիստեմի համակարգիչներն են, որոնք Հայաստանում են նախագծվել: Այստեղ բավականին լավ վիճակում էր միկրոէլեկտրոնիկան. մենք անգամ տիեզերական ծրագրերի համար պատրաստել ենք սարքեր, որոնք տիեզերքում աշխատել են բավականին հաջող: Լուրջ հաջողություններ ենք ունեցել ֆիզիկայի, միկրոկենսաբանության, մոլեկուլային կենսաբանության, կենսատեխնոլոգիաների ասպարեզներում: Նշված այս բոլոր ոլորտները, որոնք զարգանում էին Հայաստանում, ունեցել են բարձր վարկա-

կենտրոններ ստեղծել: Օրինակ՝ ԵՊՀ-ն ստեղծեց հայագիտության ինստիտուտ. արդեն գիտխորհրդի ղեկավարը կա: Կարևոր է, որ հայագիտությունը բացի իր սահմանները. մենք պետք է ավելի շատ դրսում հրատարակվենք, որպեսզի մեր ազգի, մեր պետության անցյալը, ներկան և ապագան բոլորի համար հասկանալի լինի...

Թե գիտության զարգացման ի՞նչ հեռանկարներ են տեսնում՝ նշեմ, որ աշխարհում կան բազմաթիվ ոլորտներ, որոնք համաշխարհային մասշտաբի գերակայություններ են: Դրանք են՝ մոլեկուլային կենսաբանությունը, կենսատեխնոլոգիաները, միկրոէլեկտրոնիկան, էլեկտրոնիկան ընդհանրապես, ֆիզիկայի տարբեր ասպարեզները, մասնավորապես բարձր էներգիաների մասնիկների ֆիզիկան, միջուկային ֆիզիկան: Այս բոլոր ասպարեզներում Հայաստանն ունի դեռ բավականին որակյալ կադրեր, և լուրջ զարգացումներ ինքնուրույն կակնկալում ենք: Շատ շուտով, մինչև աշուն, կորոշվեն մեր պետության գիտական գերակայությունները, ու ըստ այդմ ֆինանսավորման բաշխումը մենք կաշխատենք հնարավորինս արդյունավետ կազմակերպել: Ի դեպ նշեմ, որ այս տարի արդեն մոտավորապես 2-2,5 անգամ ավելացրել ենք հետազոտական հիմնարկների տնտեսական ծախսերը, ինչը հնարավորություն տվեց ինստիտուտներին ձեռնարկել ամիսներին ևս աշխատել խուսափելով հարկադրված պարապուրդից: Շատ ինստիտուտներ, կարծում են, սկսել են «շնչել» ջեռուցման համակարգեր են տեղադրում, տեխնիկա են ձեռք բերում, ի վերջո՝ դրամաշնորհների քանակն է սկսել շատանալ. իսկ երբ գիտնականը մշտապես աշխատանքի մեջ է լինում, նրա ուղեղն սկսում է ավելի օպտիմալ աշխատել...

նակությունը բարձրանա, քանի որ դրա բոլոր հնարավորություններն այսօր ունենք՝ մարդկային որակյալ ռեսուրսների առումով: Մեր հիմնական խնդիրներից է, կրկնեմ, ֆինանսավորումը, ինչպես նաև կիրառական գիտությունների ներդրման կարևորումը, այսինքն՝ գիտության արդյունքների առևտրայնացումը: Հասնել նրան, որ գործարարը մեր սեփական գիտնականին պատվեր տա. այս գիտակցման սերմանումը շատ անհրաժեշտ են համարում:

**Ինչպե՞ս դարձաք «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ. ինչպե՞ս եք մեկնաբանում բարեպաշտության և գիտության «փոխհարաբերությունը» (Ա. ՇԱՀԲԱԶՅԱՆ):**

-Միանգամից կասեն. լավ գիտնական լինելու համար պետք նաև բարեպաշտ անձնավորություն լինել, այսինքն՝ լինել ազնիվ, լինել աշխատասեր, լինել հայրենասեր: Գիտնականի կերպարը ես հենց դրանում են տեսնում. նա ոչ միայն պետք է իր գիտական խնդիրներով զբաղվի, այլև հասկանա, թե ո՞ւմ է դա հարկավոր: Այնպես որ՝ այս երկու գաղափարը իրար լրացնում են: Իսկ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի հազաբարձուների խորհրդի անդամ դառնալ ինձ առաջարկել է հիմնադրամի հիմնադիր նախագահ պրոֆ. Բեգլարյանը, ես էլ սիրով համաձայնել եմ, քանի որ այն առաքելությունը, որն իրականացնում է հիմնադրամը, հոգեհարազատ է ինձ: Այն գործը, որ այսօր անում է «Բարեպաշտ սերունդը», ես հույս ունեմ, որ ապագայում կընդարձակվի. դա իսկապես շատ կարևոր առաքելություն է: Ու մեր երիտասարդներն էլ պետք է հասկանան, որ կան բարերարներ, անհատներ, որոնք իրենց գործվիզ են ու պատրաստ են ամեն կերպ աջակցելու իրենց:

# «ԼԱՎ ԳԻՏՆԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՆԱԵՎ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼ»

Հ Ա Ր Ց Ե Ր Ն Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Ց

դել եմ՝ և ֆիզիկայի ֆակուլտետի պատ-

տարվա ընթացքում նաև աշխատակազմն է ձևավորվել, տեսնում եք՝ տեղափոխվել ենք նոր հասցե՝ վերանորոգված հարկաբաժին ունենք: Ինչպես բոլոր նորաստեղծ կառույցներում՝ մենք էլ մեր դժվարություններն ունենք, որովհետև սկսում ենք «սահմանադրությունից»: Մեծ առումով երեք բնութագրեն այս պահի մեր գործունեությունը՝ հայեցակարգերի մշակման ընթացքի մեջ ենք: Ովքեր կցանկանան ավելի մանրամասն տեղեկանալ, կարող են օգտվել մեր կայքից՝ [www.secs.am](http://www.secs.am) :

նության մեջ, և մեր ամբիոնում, և համալսարանում, ու հույս ունեմ՝ իմ այս աշխատանքում նույնպես իմ ներդրումը կունենամ:

**-Ըստ Ձեզ՝ ի՞նչ որակներով պետք է կրթվի ու դաստիարակվի այսօրվա դպրոցականը, որպեսզի ձգտում ունենա ապագայում զբաղվելու գիտությամբ. մի ոլորտ, որը մերօրյա իրականության մեջ դադարել է երազանքի առարկա լինել (ՍՈՒՄԱՆՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Հյուսիսային համալսարանի իրավաբանության ֆակուլտետի ամբիոնի վարիչ):**

**-Այսօր հանրակրթությունն ապրում է բարեփոխումների ժամանակաշրջան. ինչպե՞ս եք գնահատում այդ բարեփոխումները որպես ծնող (գիտեն, որ դպրոցահասակ երեխա ունեք), ի՞նչը չի գոհացնում ձեզ (Ա. ԻՎԱՆՅԱՆ):**

-Նախ՝ գիտնականի վարկանիշի վրա պետք է աշխատել: Այդ խնդիրը խորհրդային ժամանակներում չկար, որովհետև գիտնականներին վերաբերվում էին որպես աստվածային էակների: Այսօր այլ է: Նախ՝ պետք է բարձրացնել նրա աշխատավարձը, որ գիտական հետաքրքրություններին տրամադրված ժամանակի դիմաց նրա ընտանիքը քաղցած չմնա: Որպեսզի նախ նրա երեխան հարգի նրան... Գիտակցում է անհրաժեշտ, որ գիտնականը պետության համար կարևոր նշանակություն ունեցող սուբյեկտ է, ով իրավունք ունի իր աշխատանքի դիմաց համապատասխան ուշադրության արժանանալու: Ցավոք, այդ մոտեցումը Հայաստանում դեռ չկա: Դրա համար էլ այսօր գիտնականի վարկանիշն ընկած է: Պետք են խրախուսման միջոցներ. օրինակ՝ կո-

3 ← **-Լինելով գիտության պետական կոմիտեի նախագահ՝ ի՞նչ եք կարծում՝ այսօրվա ուսանողների քանի՞ տոկոսը կդառնա արժանի հերթափոխ գիտնականների ներկայիս սերնդին: Արդյո՞ք կոմիտեն ունի իրավասություն կամ գործիքներ՝ այս գործում դերակատարություն ունենալու համար (ՍՈՍԵ ՉԱՆԴՈՅԱՆ, լրագրող, 20 տարեկան):**

-Անկասկած, կոմիտեն ունի այդպիսի դերակատարություն՝ իրեն վերապահված իրավասությամբ, որովհետև, ինչպես արդեն նշել եմ, այն մեր հանրապետությունում գիտական ու գիտատեխնիկական գործունեության քաղաքականությունը որոշող և իրականացնող կառույցն է:

Ինչ վերաբերում է հարցի առաջին մասին՝ այսպիսի վիճակագրություն կա. սովորաբար, այս կամ այն ֆակուլտետն ընդունված ուսանողների ընդամենը 2-3 տոկոսն է դառնում գիտնական: Չմոռանանք, որ գիտնականը ուրիշ կատեգորիա է. որովհետև, օրինակ, ֆիզիկոս՝ դեռ չի նշանակում գիտնական: Ֆիզիկոսը կարող է, չէ՞, աշխատել որպես դասատու կամ վարչական աշխատող, դա հո չի՞ նշանակում՝ նա գիտնական է: Եվ եթե ընդհանրացրած ասեն, փաստորեն՝ ամեն տարի որևէ ֆակուլտետ ընդունվող մոտ 100 ուսանողից 2-4-ն են դառնում գիտնականներ... Ու այսպիսի համամասնությունն այսօր առկա է ամբողջ աշխարհում. դա նորմալ համարվող ցուցանիշ է: Բայց եթե համեմատեն ուսանողական տարիների դիտարկումների հետ՝ ֆիզիկալ ընդունվող 175-ից 10-12-ն էին դառնում գիտու-

ղեցի պայմանագրային աշխատանքս, քանի որ Հայաստանից ինձ համոզում պահանջում էին վերադառնալ ու վերադարձա 92-ին՝ այն ժամը տարիներին՝ համալսարանում ստանձնելով ամբիոնի վարիչի աշխատանք: Շատերն ինձ չհասկացան, թե ինչպե՞ս կարող էի 4,5 մլն լիր աշխատավարձը «փոխել» 30 դոլարի հետ... 94-2000թվականներին եղել եմ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի վարիչը, տեղում իրականացրել բազմաթիվ դրամաշնորհային ծրագրեր՝ մոտավորապես 1 մլն դոլարի, ու պատահական չէ, որ մեր ամբիոնը այսօր համալսարանում լավագույններից մեկն է. միայն 300 հազար դոլարի սարքավորումներ եմ ես գնել այդ շահած գումարներով, իսկ ծրագրերում ընդգրկված են եղել ավելի քան 80 ֆիզիկոսներ, կենսաբաններ, բժիշկներ: Այս ամենը կարևոր էր նաև նրանով, որ այդ ժամը տարիներին նրանք նույնպես, պահանջված լինելով, չհեռացան, մնացին Հայաստանում: 2000-2006-ին ղեկավարել եմ ֆիզիկայի ֆակուլտետը, իրականացրել մոտ 3 մլն դոլարի ծրագրեր: Այս տարիներին, փաստորեն, ինձ համար էլ անպատասխան, սկսեցի հետաքրքրվել զբաղվել գիտության կազմակերպման խնդիրներով, հասկացա, որ դա էլ մի առանձին գիտություն է... Ապա նշանակվեցի գիտության գծով պրոռեկտոր, իսկ 1,5 տարի անց՝ 2007թ. նոյեմբերից՝ նորաստեղծ ԳՊԿ-ի նախագահն եմ:

Նշեմ նաև, որ գիտության բարեփոխումների հայեցակարգ մշակող երեք թիվներից մեկի ղեկավարն եմ եղել, ու, ըստ

թյանը զբաղվողներ (այս էլ փայլուն): Չրգիկայի ֆակուլտետի համար այսօր էլ այդ թիվը համարյա անփոփոխ է. կավելացնելի, որ հիմա մեզանից շատ ավելի լավն են: Ավելի լավն են այն առումով, որ շատ ավելի ինֆորմացված են՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներկայիս պայմանները նկատի ունենալով: Առանց չափազանցության կասեմ, որ այսօր մեր խելքը, ունակ և կարող երիտասարդների տոկոսը շատ ավելի բարձր է, քան շատ-շատ զարգացած երկրներում:

**-Պատմեք, խնդրում եմ, Չեր անցած ճանապարհի մասին, ինչո՞վ է պայմանավորված Չեր ներկայիս աշխատանքը: Եթե ամեն ինչ սկսեիք նորից, ապա գործունեության ինչպիսի՞ ոլորտ կընտրեիք և ինչո՞ւ (Ս. ՉԱՆԴՈՅԱՆ):**

-Ասեմ, որ չէի ուզում ֆիզիկոս դառնալ: Երազանքս ավիակոնստրուկտոր դառնալն էր: 8-9-րդ դասարանից զբաղվում էի ավիամոդելիզմով ու գործերս էլ սովեցի Խարկովի ավիահիմնադրամասում... Բայց մայրս շատ էր վախենում, որ կմեկնեմ Ռուսաստան ու այլևս չեմ վերադառնա, և ինձ չթողեցին: Ու հակառակ ծնողներիս կամքին (նրանք երազում էին, որ բժիշկ դառնամ)՝ գործերս բերեցի-հանձնեցի ֆիզիկայ, ընդունվեցի մեկ քննությանը (քանի որ մեղալակիր էի), իսկ երրորդ կուրսից էլ ընտրեցի մոլեկուլային կենսաֆիզիկա մասնագիտությունը: Չերկարացնեմ՝ բավականին արագ դարձել եմ գիտության թեկնածու, իսկ 37 տարեկանում արդեն դոկտորի աստիճան ունեի: Ասպիրանտական գործունեությունն էլ, չնայած ընդունվել էի Հայաստանում, բայց հիմնականում ծավալել եմ Բելառուսիայում ու Ռուսաստանում: Հետագայում ԵՊՀ-ում դարձա մակրոմոլեկուլային ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ, ապա գործուղվեցի Իտալիա, որտեղ երեք տարի աշխատեցի Ֆլորենցիայի համալսարանում՝ որպես պրոֆեսոր: Բայց այդտեղ կիսատ թո-

ւրույթիս, այս աստը սկստի ուսումնական էր, որ հանրապետության նախագահին ինձ առաջարկեց ներկայիս աշխատանքը:

**-Ինչպիսի՞ն պիտի լինի բարեպաշտ երիտասարդը, առավել ևս՝ գիտնականը: Ինչպե՞ս պետք է սերմանել բարեպաշտության գաղափարը, ինչո՞ւ է այն անհրաժեշտ (Ս. ՉԱՆԴՈՅԱՆ):**

-Բարեպաշտ երիտասարդը, իմ պատկերացմամբ, պետք է շատ սիրի իր հայրենիքը, հասկանա, որ Հայաստանից ավելի լավ երկիր չի գտնի, անպայման լինի ազնիվ: Այսօր ազգովի պետք է հասկանանք, թե որտեղի՞ց ենք եկել և ո՞ր ենք ուզում գնալ, ի՞նչ է մեր ուզածը: Մեր պատմությունը շատ դաժան է եղել, ու բարեպաշտ մարդկանց շնորհիվ է նաև, որ մեր ժողովուրդը կարողացել է գոյատևել: Բարեբախտաբար, այսօր էլ կա այդ լավագույն սերունդը: Բարեպաշտությունը պետք է ավելի խտացված լինի գիտնականի մեջ. նա պետք է որոշակի գոհողությունների պատրաստ լինի: Պետք է կարողանա ուրախանալ նաև իր կողքի գիտնականի հաջողություններով. սա էլ շատ կարևոր է:

**-Ո՞րն է եղել Չեր կյանքի ամենահաջողված նախաձեռնությունը և ո՞ր քննադատում (ԱՐՄԻՆԵ ԻՎԱՆՅԱՆ, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիայի քարտուղար):**

-Իմ ամենահաջողված նախաձեռնությունը իմ որակյալ գավակներն են՝ որդիս ու երկու դուստրս: Տղաս կենսաբան է, աշխատում է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում, ավագ դուստրս տնտեսագետ է, զբաղվում է բանկային գործով, իսկ կրտսեր դուստրս 11 տարեկան է, ջութակահար, արդեն երկու անգամ հանրապետական մրցույթների դափնեկիր է ճանաչվել:

Մեկ էլ իմ աշխատանքն է. համարում եմ, որ դառնալով ֆիզիկոս՝ ես ինչ-որ հետք, համեմայն դեպս՝ մինչև հիմա, թո-

կան բարեփոխումներն ինձ այնքան էլ չեն գոհացնում:

**-Առաջարկ՝ գիտական համակարգ մուտք գործելու համար սահմանափակում՝ իսկապես արժանիների համար (ԼԻԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ, մշակույթի նախարարության գլխավոր մասնագետ):**

-Ոչ արժանիները մուտք են գործում, որովհետև պատվիրատու չունենք: Եվ հաճախ դիպումն ավելի մեծ արժեք ունի, քան թե գլուխը: Այ երբ որ շուկա կունենանք, երբ կլինի լուրջ պատվիրատու, չեն մայի թղթի կտորի, այլ կգնահատվեն գիտելիքն ու աշխատելու կարողությունը, հմտությունը:

**-Արդյոք ոչ պետական բուհերի համար նախատեսվո՞ւմ են դրամաշնորհային ծրագրեր՝ գիտական նախագծեր ֆինանսավորելու համար (ԼԻԼԻԹ ՉԱԶԱՐՅԱՆ, Հյուսիսային համալսարանի ուսումնական վարչության պետ):**

-Իհա՛րկե, դրամաշնորհային ծրագրերը բոլորի համար ազատ են, նույնիսկ՝ աշխատանք չունեցողի համար. եթե դու խելքը ծրագիր ես առաջարկել, և այն մրցույթն անցել է՝ արժանանալով անկախ փորձագետների բարձր գնահատականին, ի սեր Աստծո՛ւ ստացիր: Մենք ոչ մի սահմանափակում չենք դնում՝ կլինի մասնավոր հաստատություն, թե պետական, կլինի անհատ, թե որևէ կազմակերպություն. խնդրեմ՝ մասնակցեք:

**-Ի՞նչ խնդիրներով է զբաղվում գիտության պետական կոմիտեն, ի՞նչ քայլեր է հասցրել իրականացնել 1-ամյա գործունեության ընթացքում: Արդյոք ճիշտ չի՞ լինի ԿԳՆ-ն տարանջատել գիտության և կրթության առանձին նախարարությունների (Լ. ՉԱԶԱՐՅԱՆ):**

-Խնդիրներին ու իրականացրած քայլերին, կարծեմ, արդեն որոշակիորեն անդրադարձել եմ՝ պատասխանելով նախորդ հարցերին: Ավելացնեմ միայն, որ մեկ

միտեն ապագայում առաջարկելու է, որ գիտության գծով պետական մրցանակ սահմանվի, որպիսին այսօր չկա: Որ առավել հաջողություններ գրանցած գիտնականը պետության կողմից առանձնահատուկ ուշադրության արժանանա: Որ գիտնականի օր գաղափար լինի մեզանում: Որ գիտնականների գիտական արդյունքները հանրությանը ներկայացնելու համար առաձիճ հեռուստաալիք ունենանք. այսօր միացնում ես հեռուստացույցը, տեսնում ես, շատ ներողություն, փողոցում անբարո կանանցից անգամ հարցազրույց են վերցնում, բայց լուրջ գիտնականները չեն երևում: Գիտնականի հասարակական վարկանիշի բարձրացման ուղղությամբ լուրջ աշխատանքներ ունենք անելու:

**-Կարո՞ղ եք որևէ «դեղատոմս» առաջարկել՝ դաստիարակական բնույթի, որպեսզի ուսանողների մեծ մասը կարողանան դասն ու ուսումնական հաստատությունը տարբերել գեղեցկության սրահից (ՏԻԳՐԱՆ ԱԲՐՈՅԱՆ, Հյուսիսային համալսարանի ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող):**

-Նորից պետք է անդրադառնամ այն փաստին, որ մասնագետի շուկա չկա այսօր: Եթե այն լինի, ամեն մի ուսանող իր ընտրած մասնագիտությունը կհարզի՝ հասկանալով, որ վաղն այն իրեն հաց է տալու: Եվ դասի կգա ոչ թե իրեն ցուցադրելու՝ հետագայում ինչ-որ թղթի կտորի ակնկալիքով, այլ կգա իսկապես սովորելու, գիտելիքներ, կարողություններ ձեռք բերելու:

**-Ո՞րն է, ըստ Չեզ, մարդկային համակեցությունում հայության արժանավայել հարատևման գրավականը («ԲԱՐԵՊԱՍՏ ՍԵՐՈՒՆԻ» ամսաթերթի ավանդական վերջնահարց):**

-Մեր հարատևման գրավականը մեր լեզուն է, դպրոցը, եկեղեցին ու բանակը:

Ս Ն Ո Ւ Շ Ս Մ Բ Գ Ս Յ Ա Ն